Հաշվի առնելով համայնքի բնակչության հողի մշակման նկատմամբ մեծ պահանջարկը համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ

1. Դիմել Գեղարքունիքի մարզպետին միջամտելու համապատասխան ատյաններում բարձրացնելու համայնքի բնակչության կարևոր հողը հարցերից մեկը՝ նշված 1027,76 հա վարելահողը և 77,80 հա արոտավայրը Նորակերտի համայնքային սեփականություն դարձնելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին 2. Նորակերտ համայնքի բնակչուհի Արև Զաքարյանի դիմումը երեխայի բուժումը շարունակելու համար դրամական օգնություն հատկացնելու մասին.
Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթներով և համայնքի բնակչուհու կողմից արված դիմումը համայնքի ավագանին

Որոշեց

1. Բավարարել համայնքի բնակչուհի՝ Արև Զաքարյանի դիմումը, համայնքի բյուջեից հատկացնել 25000 /քսանհինգ հազար/ դրամական օգնություն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| հ/հ | Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Գագիկ Սարգսյան | | | |
| 2 | Դավիթ Գալստյան | | | |
| 3 | Մանուկ Հակոբյան | | | |
| 4 | Վոլոդյա Սիմոնյան | | | |
| 5 | Վիտալիկ Վարդանյան | | | |

Նորակերտ համայնքի ղեկավար Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնք
Գ. Նորակերտ 2 փող. 34 շենք հեռ. 094 11 21 65

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11.12.2018 թ-ի թիվ 17 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանին՝

Որոշեց.

Հաստատել Նորակերտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի 12 նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.Նորակերտ համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի քննարկման և հաստատման մասին:

/ զեկ. Գ. Սարգսյան – համայնքի ղեկավար /

2. Դիմումների քննարկում:

/ զեկ. Ա. Նշանյան – աշխատակազմի քարտուղար /

Լսեցին 1. Նորակերտ համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի քննարկման և հաստատման մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» 1997 թ-ի հունիսի 24-ի օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածի դրույթներով, համայնքի ավագանին

Որոշեց

1. Հաստատել Նորակերտ համայնքի 2019 թվականի բյուջեն՝
   ա/ եկամուտների գծով՝ 28441,9 հազար դրամ
   բ/ ծախսերի գծով՝ 28441,9 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին տեսակների՝ հավելված 1

3. Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հավելված 2։
4. Համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավելված 3
5. Համայնքի բյուջեի հավելուրդը՝ տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 951,2 հազար դրամ, կամ դեֆիցիտը/պակասուրդը/ հավելված 4։
6. Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ հավելված 5։ Հավելուրդը 981,5 հազար դրամը՝ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս։
7. Սահմանել, որ՝
ա/ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում պահպանելով ծախսերի համամասնությունը։

Լսեցին 2. Դիմումների քննարկման մասին.
Աշխատակազմի քարտուղարը ներկայացրեց համայնքի բնակիչների կողմից ստացված դիմումները, հիմնականում բուժման և սոցիալական անապահովության պատճառով.

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին ուղղված համայնքի բնակիչներ՝ Արարատ Վարդանյանից բուժման ծախսերի, Ներսես Գալստյանից բուժ զննման ծախսերի, Հովհաննես Սիմոնյանից կնոջ բուժ զննման ծախսերի, Լուսինե Դավթյանից երեխայի բուժման ծախսերի, Միշա Վարդանյանից սոցիալական կարիքները հոգալու համար ներկայացված դիմումները, և հաշվի առնելով նրանց վիճակը համայնքի ավագանին.

Որոշեց

1. Բավարարել Նորակերտ համայնքի բնակիչների,թվով հինգ հոգու դիմում խնդրանքը համայնքի բյուջեի սոցիալական բաժնից յուրաքանչյուրին հատկացնել 50000 /հիսուն հազար/ դրամ օգնություն։

| Հ/հ | Անուն ազգանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Գագիկ Սարգսյան | | | |
| 2 | Դավիթ Դալաքյան | | | |
| 3 | Մանուկ Հակոբյան | | | |
| 4 | Վալյա Մելքոնյան | | | |
| 5 | Վաչիկ Վարդանյան | | | |

Նորակերտ համայնքի ղեկավար Գ. Սարգսյան